



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 131 - Ա

24 մարտի 2020թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 15-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրերի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 176-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետի «Ճամբարակի տարածք» բաժնում «**Բաբայան Վախթանգ - Ճամբարակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ**» բառերը փոխարինել «**Ծատուրյան Ժասմեն - Ճամբարակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի փաստաթղթավար**» բառերով:

24.03.2020



 Արձարկան: SANOSYAN GNEL 1710830069

**ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Գավառ